ԿԱՐԵՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել բանասիրական գիտությունների դոկտոր Քնարիկ Տեր-Դավթյանի «Հայելի վարուց» գիրքը, ուր հիշյալ գործի գեղարվեստական առանձնահատկություններին, թարգմանության հանգամանքներին և ձեռագրագիտական խնդիրներին նվիրված հեղինակի վերլուծական առաջաբանին հաջորդում են քննական բնագիրը, տարընթերցվածները և ծանոթագրությունները:

«Հայելի վարուցի» լատիներեն բնօրինակը ստեղծվել է 1408 թ.՝ ընդգրկելով նախորդ դարերի մոտ վաթսուն հեղինակների նյութեր: Այս ժողովածուի ծնունդը պայմանավորված էր կյանքի թելադրանքով՝ քրիստոնեական բարոյականությունը ժողովրդին բացատրել պարզ, մատչելի և գրավիչ ձևով: Այս նպատակով, սկսյալ 12-րդ դարից, բարոյախոսական առակը դառնում է քարոզի բաղադրիչ մասը: Աստվածաբանական բացատրություններին ի հավելում բերվող հիշյալ առակները, ունենալով ներգործող ուժ, առավել դյուրընկալելի էին դարձնում քարոզում արտահայտված գաղափարները: Դրանցում գործող անձինք ոչ միայն մարդիկ էին, այլև հրեշտակները և դևերն ու սատանաները, որոնք հանդես են գալիս որպես մարմնավորված էակներ: Նայած թե նրանցից ում է հետևում մարդը, կա՛մ փրկվում է, կա՛մ էլ կորստյան վիհը նետվում, և շնորհիվ այս առակների քարոզներում քրիստոնեական ուսմունքի վերացական գաղափարները ներկայացվում էին ժողովրդի գեղարվեստական մտածողությանը բնորոշ օրինակների վկայակոչմամբ: Հետագայում դրանք ի մի ժողովվեցին «Հայելի օրինակաց» և «Մեծ հայելի» ժողովածուներում, որոնք ընթերցողին ներկայացվում են որպես մի հայելի, ուր նա իր հոգեկան առաքինություններն և թերությունները կտեսնի բերվող օրինակների միջոցով: Լինելով ոչ թե մեկնողական, աստվածաբանական գործ, այլ ծառայելով քրիստոնեական բարոյականության ոգով ունկնդրին դաստիարակելուն, նրանում գրեթե չի արտացոլվել ահեղ դատաստանի գաղափարը: Փոխարենը զրույցների գերիշխող մասն ավարտվում է մարդու մահից անմիջապես հետո տեղի ունեցող «Փոքր դատաստանի» պատկերմամբ, որը ևս արդյունք է ժողովրդային

միջավայրին հասցեագրված լինելուն, քանի որ սովորական մարդուն հասամարդկային վախճանաբանական հարցերից առավել հետաքրքրում էր, թե ինչ է սպասում իրեն անմիջապես իր մահից հետո:

«Հայելի վարուցը» հոգեհարազատ և սրտամոտ լինելով հավատացյալներին, դարձել էր միջնադարյան քրիստոնեական աշխարհի ամենատարածված գրքերից մեկը: Մեզ մոտ էլ թեև առանձին զրույցների հանդիպում ենք դեռևս միջնադարյան ձեռագրերում, սակայն այս գործի ամբողջական թարգմանությունը կատարվել է 17-րդ դարի նշանավոր աստվածաբան և գրական-մշակութային գործիչ Ստեփանոս Լեհացու կողմից:

Նա ծնվել է Լվովում, ուր, շնորհիվ իր ստացած կրթության, լավագույնս տիրապետում է լատիներենին և լեհերենին՝ խորանալով նաև աստվածաբանության, գրականության և արվեստի բնագավառներում: Փիլիպոս կաթողիկոսի գահակալության շրջանում փոխադրվում է Էջմիածին, ուր ծավալում է թարգմանական, մեկնողական և նկարչական բուռն գործունեություն: Լեհացին մահացել է խոր ծերության մեջ և թաղված է Ս. Հռիփսիմեի տաճարի բակում:

Թեև Լեհացու ինքնագիր օրինակը չի պահպանվել, սակայն կան ձեռագրեր, որոնք ենթադրվում է, որ ընդօրինակվել են նրա հսկողության ներքո, և քննական բնագիրը կազմելիս առաջնությունը տրվել է նախ այս ձեռագրերին: Անդրադառնալով բանասիրության մեջ վիճելի լատիներենից թե լեհերենից թարգմանված լինելու հարցին, երկու լեզուների հետ զուգադիր համեմատությամբ ցույց է տրվում, որ հայերենը համընկնում է լեհերեն բնագրին, հօգուտ որի բերվում են լեզվա-ոճական փաստարկներ և ձեռագրերի հիշատակարանային վկայություններ:

«Հայելի վարուցը» ունի 246 միավոր պարունակող 70 գլուխ, և գրքի ծանոթագրություններ բաժնում ցույց է տրված, թե յուրաքանչյուր միավոր պատմությունը ինչպես է մուտք գործել հայ մատենագրություն, ինչ ձեռագրերով է վկայված և ինչ ժողովածուներում է հանդիպում:

Այս գործի ամբողջական թարգմանությունն էլ Քնարիկ Տեր-Դավթյանը պայմանավորում է հոգևոր այն վերածնությամբ, որն սկսվեց 17-րդ դարի առաջին տասնամյակում, նախորդ մեկդարյա թուրք-պարսկական արյունալից պատերազմից հետո, որը ոչ միայն ավերել և ամայացրել էր երկիրը, այլև բարոյական նկատելի անկման ենթարկել հոգևոր ու ֆեոդալական դասերին: Նաև վերջիններիս թերություններն ասես այպանող «Հայելի վարուցի» թարգմանությունը շարունակումն էր այն հոգևոր շարժման, որի հիմքերը դրվեցին 1610 թ. հիմնված Տաթևի մեծ անապատում: Հատկանշական է, որ «Հայելի վարուցի» հատվածները համահունչ են այն նկարագրություններին, որոնց հանդիպում ենք Առաքել Դավրիժեցու պատմությունում:

«Հայելի վարուցի» ամբողջական վերնագիրը՝ «Հայելի վարուց, յորում կան պատմութիւնք հեշտալուրք եւ բանք օգտակարք առ ի փրկութիւն մարդկան», լավագույնս արտահայտում է այս գործի գրության նպատակը, այն է՝ հեշտալուր և օգտակար պատմություններով մարդուն ետ պահել մեղքերից և դատիարակել առաքինի գործերով՝ հանուն նրա փրկության: Ժողովածուն սկսվում է մարդկային ամենամեծ ախտերից մեկի՝ ագահության այպանմամբ: «Յաղագս ագահութեան» գլուխը, որում բերված են ագահությունը դատապարտող պատմություններ, սկսվում է ավետարանական հե-

տնյալ վկայակոչմամբ. «Տէր մեր Յիսուս Քրիստոս հրամայէ ի փրկական Աւետարանին, թէ՝ «Ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին»:

Ինչպես ասացինք, այս գրքում գերիշխում է փոքր դատաստանի գաղափարը, թե ինչ է սպասվում մեղավոր կամ առաքինի մարդուն անմիջապես նրա մահից հետո: Ագահի մասին բերվում է հետևյալ պատմությունը. մի ագահ մարդ երբ մահանում է, հարազատները, ցանկանալով իմանալ նրա անակնկալ մահվան պատճառը, քննում են նրա մարմինը և զարմանքով տեսնում, որ սիրտը չկա: Այն սենյակում, ուր նա պահում էր իր կուտակածը, հավաքված գանձերի վրա նստած սատանան ագահի սիրտը ձեռքին ասում է, թե այս սիրտը իմն է, որովհետև ոսկու և արծաթի դիմաց նա այն ինձ վաճառեց: Այս գլխի մեկ այլ պատմությունում այն միտքն է ընդգծվում, թե ունեցվածքը խանգարում է հոգևորականին ամբողջովին աստվածային մտածումներին տրվելու, և բերվում է հետևյալ օրինակը. էշով տարբեր վայրեր շրջող մի քարոզիչ, որը կյանքի խոսքն էր սերմանում, մի անգամ եկեղեցի մտնելիս էշը կապում է դրսում և ինքը ներսում աղոթում, սակայն աղոթքի ընթացքում շարունակ մտածում է, թե ինչ եղավ ավանակը, հանկարծ չգողանան: Զգալով, որ իր սիրտը իր ունեցվածքի մոտ է, դուրս է գալիս, չնչին գնով վաճառում, ապա նորից ներս մտնում և շարունակում անխոով սրտով աղոթքը: Աղոթքի համար կարևոր պայման է համարվում մաքուր սրտով և հոգով աղոթելը: Մեղասաեր մեկը միշտ Տիրամորն էր աղոթում և մի օր, երբ անապատով անցնելիս քաղցում է, Աստվածամայրն է երևում նրան շրջապատված վայելչագեղ կույսերով և տալիս ընտիր կերակուր, որը լցված էր մի գարշելի կեղտոտ ամանի մեջ: Մարդը ասում է՝ այս ընտիր կերակուրը չեմ կարող ուտել ամանի պատճառով: Ամենօրհնյալ Տիրամայրն էլ նրան պատասխանում է, թե քո փառաբանությունն էլ, որ ինձ ես մատուցում, բարի է և գեղեցիկ, բայց անմաքուր է քո սիրտը, որի պատճառով չեմ ընդունում քո խոսքերը, որից հետո մարդը մաքրվում է ապաշխարությամբ:

Ուսանելի օրինակներ են բերվում նաև մյուս մեղքերի համար: Բամբասողի մասին պատմվում է, թե մահից հետո նրան սկսում է տանջել անբնականորեն մեծացած և բերանից դուրս եկած լեզուն, որով նա կենդանության օրոք չարախոսում էր մարդկանց: Այսինքն կյանքում ասված յուրաքանչյուր սուտը մահից հետո մեծացնում է լեզուն, որն էլ տանջում է մարդուն:

Ինչ անես, առջևդ կգա՝ ժողովրդական խոսքի գեղարվեստական գեղեցիկ մի անդրադարձումն է «Յաղագս դաւաճանութեան» գլխում բերված այս զրույցը. մի աբեղա, ցանկանալով դառնալ վանահայր, վերջինիս մոտ կըրթվող մանկանը մահվան դեղ է տալիս ասելով, որ եթե սրանից գցես վանահոր կերակրի մեջ, այսուհետև նա քեզ միայն կսիրի և երբեք չի անարգի: Պատանին, հավատալով, այդպես էլ վարվում է, դեղի կեսը սակայն պահում է՝ մտածելով, որ եթե հետո վերաբերմունքը հանկարծ նորից փոխի, վերստին լցնի: Վանահայրը, ճաշակելով թունավորված կերակուրը, մահանում է, և աբեղան դառնում է վանահայր ու առավել խիստ սկսում նեղել սանին: Այդժամ նա մնացյալ դեղն էլ լցնում է անարժան աբեղայի կերակրի մեջ՝ մտածելով, որ նա էլ իր հանդեպ բարի կդառնա, և աբեղան իսկույն մահանում է, այնպես, ինչպես ծրագրել էր թունավորել վանահորը:

Ընդհանրապես «Հայելի վարուցում» առավել խիստ և ծանր են նկարագրությունները մեղավոր հոգևորականներին սպասվող դատաստանի մա-

սին, քանի որ նրանք, լինելով Աստծո սպասավորները, մարդկանց պետք է հեռու պահեին մեղքերից և ոչ թե իրենք ընկղմվեին դրանց մեջ: Նմանները այս գործում անվանվում են կրոնավոր զգեստով և ոչ վարքով, անվամբ և ոչ գործով: «Յաղագս առաջնորդաց» գլխում պատմվում է, թե մի անբարո արքեպիսկոպոս մահանում է թշվառական մահով, և Աստծո արդար մի մարդու նրա վախճանը այսպես է երևում. նախ հոգին անհնարին չարչարանքներով դուրս է գալիս մարմնից, ապա սատանաները նրան տանում են իրենց իշխանի մոտ, որը, ողջունելով անարժանին, մի բաժակ է մեկնում՝ ասելով, թե ողջ լեր իշխան ժողովրդի, ողջ եղիր և ըմպիր այս բաժակը, քանի որ այսքան տարի հավատարմաբար ինձ ծառայեցիր: Երբ նա հրաժարվում է, սատանաները ուժով են խմեցնում, որից հետո աչքերից և ականջներից ծծմբալից բոց է ելնում, քանի որ բաժակի պարունակությունը խորհրդանշում էր կյանքում գործած մեղքերը: Որպես եզրակացություն վերջում ասվում է, թե այսպիսին է բոլոր նրանց վախճանը, ովքեր անարժանապես են տերունական իշխանությունը ընդունում և չարաբար վարում այն:

Նման սարսափելի նկարագրություններով շարունակ հիշեցնելով, թե ինչ է սպասվում անարժան հոգևորականին, միաժամանակ շեշտվում է այն միտքը, թե նրանց Աստված է դատելու և ոչ թե մարդիկ, և որ անգամ անարժան քահանայից պարտ է հաղորդություն ընդունել և մեղքերի մեջ թաղված քահանային էլ խոստովանել մեղքերը, որից հետո Աստված մեզ թողություն կշնորհի, իսկ իր անարժան սպասավորին կպատժի Դատաստանի ժամանակ: Ի հավաստումն այս մտքի պատմվում է, թե մի մարդ տեսնում է քահանային, երբ նա «ի շնութեան ընթանալ էր», սակայն առանց երկբայության գնում և նրա ձեռքից հաղորդություն է ընդունում, ապա խնդրում է խաչակնքել բորոտությամբ պատված իր ճակատը: Երբ քահանան խաչակնքում է, բորը կեղևի նման վայր է ընկնում: Զրույցի եզրակացությունում ասվում է, թե երբ քահանային ենք դիմում, մարդուն չէ, որ մերձենում ենք, այլ Աստծուն և Տիրոջ զորությամբ ենք ստանում փրկագործ շնորհները:

Թե ինչպիսի ներգործություն են ունեցել այս զրույցները ընթերցողների վրա, ցայտուն երևում է հենց այն ընդօրինակող գրիչների արձագանքից՝ արտացոլված գրվող ձեռագրերի լուսանցքներում: Նման մի քանի բնորոշ օրինակներ Քնարիկ Տեր-Դավթյանը բերում է առաջաբանում: Այսպես ընդօրինակության տպավորության ներքո անհաբեկ գրիչը դիմում է Աստծուն հետևյալ խոսքերով. «Փրկեա զիս ի հրէն հաւիտենից» և զգուշացնում սանին. «Թակորեայ իմաստուն լեր»:

«Հայելի վարուցի» մասին Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ յոյժ համեղ և ախորժ են բանք այս գրոյս»: Ներկա քննական բնագրի հրատարակությունն էլ կարևորվում է կրկնակիորեն, թե՛ բանասիրական առումով և թե՛ հոգևոր, քանի որ այսօրվա մեր հոգևորականների համար ևս կարող է ծառայել մի շտեմարան բարոյալից օրինակների, որոնք առավել կենդանի և գրավիչ կդարձնեն ասվող քարոզը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ